ԱՍՈՐԻՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

Ժ. Գ. ԷԼԶԻՐԵԿՅԱՆ

Սելևկյան թագավորությունը (Ասորիքը) մ. թ. ա. առաջին դարում քաղաքական խոր ճգնաժամի մեջ էր։ Առևտրական խոշոր կենտրոնների ստրկատեր ավագանին դադարել էր նեցուկ լինել թագավորական իշխանությանը, որովհետև Սելևկյան թագավորության քաղաքական ու տնտեսական կառուցվածքն այժմ արդեն սահմանափակում էր ստրկատիրական հարաբերությունների զարգացումը, քաղաքների տնտեսական կյանքը։ Քաղաքային ավագանին ներդինաստիական պայքարին մասնակցում էր միայն նոր արտոնություններ կորզելու նպատակով։ Դեմքը կորցրել էր նաև վարձկան բանակը, որի հիմնական մասը հավաքագրված էր արաբներից, հրեաներից և կիլիկեցիներից։ Սելևկյան թագավորությունն այլևս չէր կարողանում վարել ներքին ճկուն քաղաքականություն, ինչպես նաև արդելք լինել ստրկատիրական նոր պետությունների՝ Պարթևստանի և Հայաստանի, ուժեղացմանը։ Սելևկյան թագավորությունը սահմանափակվել էր հիմնականում Ասորիքով, Կոյլեսիրիայով, Փյունիկիայով և Կիլիկիայի մի մասով[1]*։ Թագավորությունից անջատվեցին և արաբական ինքնուրույն պետություններ դարձան Էմեսան և Իթուրեան*[2]*։ Անկախություն է նրվաճում նաև Հրեաստանը*[3]*, որի քրմապետն ընդունում է թագավորի տիտղոս։ Անկախության պայքարից վերջինս անցնում է զավթողականի. Հրեաստանը կենտրոնական թագավորությունից խլում է Ասկալոն և Գազա նավահանգստային քաղաքները, Գալիլեան և Իդումեան։ Բուն Ասորիքի Անտիոք, Սելևկիա և Դամասկոս քաղաքների բնակչությունը հնարավորություն չուներ զբաղվելու ո՛չ հողագործությամբ, ո՛չ ծովային կամ քարավանային առևտրով, իսկ Բիբլոս և Բերիթ (Բեյրութ) քաղաքներն զբաղված էին հարևան իթուրեացիներից պաշտպանվելով։ Փյունիկյան մի շարք քաղաքներում (Տյուրոս, Սիդոն) գլուխ էին բարձրացրել նոր տիրաններ։*

Սելևկյաններն անկարող էին ջախջախել կենտրոնախույս այս ուժերը և ղսպել ժողովրդական շարժումները։ Եվ պատճառն այդ էր, որ ստրկատիրական ավագանին ստիպված եղավ մտածել գրսից թագավոր հրավիրելու մասին։ Հայոց Տիգրան II-ը ծեծում էր բուն թագավորության դարպասները, և ավագանին նրան նախընտրեց։ Ստրկատիրական ավագանու համաձայնությամբ՝ մ. թ. ա. 83 թվականին Տիգրան II-ը գրավեց Անտիոքը։ Այս մասին ուշագրավ է Հուստինոսի վկայությունը[4]*։*

«Եղբայրների փոխադարձ ատելությունը և ժառանգաբար նրանց որդիներին անցած թշնամությունը միմյանց նկատմամբ ծնեցին անընդհատ պատերազմներ, որոնք ծայր նվաստության հասցրեցին Ասորիքն ու նրա թագավոր-

---

[1] Всемирная история, т. III, М., 1956, *էջ 326—327։*

[2] Т. Моммзен, История Рима, т. III, М., 1941, *էջ 113։*

[3] А. Б. Ранович, Эллинизм и его историческая роль, М.—Л., 1950. *էջ 129—138։*

[4] Justini, Historiarum philippicarum ex Trogo Pompejo, Paris, 1821, XL, 1. *(Թարգմանությունը՝ Գ. Ե. Սարգսյանի)։*

ներին։ Ի վերջո ժողովուրդը դիմեց օտարի օգնությանը և սկսեց փնտրել օտարերկրացի թագավոր։ Ոմանք կարծում էին, որ պետք է հրավիրել Պոնտոսի Միհրդատին, ուրիշները՝ Եգիպտոսի Պտղոմեոսին։ Սակայն իրերի բերմամբ Միհրդատն այդ ժամանակ զբաղված էր հռոմեացիների դեմ պատերազմելով[5], իսկ Պտղոմեոսը մշտապես թշնամի էր Ասորիքին։ Այդ պատճառով բոլորը համաձայնության եկան Հայաստանի թագավոր Տիգրանի վրա, որը, ռազմական իր ուժը ունենալուց բացի, Պարթևների թագավորության դաշնակիցն էր և Միհրդատի խնամին[6]։ Եվ այսպես, հրավիրված լինելով Ասորիքի գահին բազմելու, նա 17 տարիների ընթացքում իշխում էր ամենայն անդորրությամբ. ինքը չէր խանգարում ուրիշների հանգիստը պատերազմներով, և ոչ ոք նրան չէր անհանգստացնում. այնպես որ պատերազմելու անհրաժեշտություն չկար»։

Աղբյուրների մի ուրիշ խումբ վկայում է, որ Տիգրան II-ն ուժով է տիրացել Սելևկյանների թագավորությանը։ Ապպիանոսն, օրինակ, գրում է. «Եվ Հայաստանի թագավոր Տիգրանը, Տիգրանի որդին, արքայից արքա կոչվեց նվաճելով մի քանի հարևան ցեղեր, որոնք ունեին իրենց սեփական գինաստները։ Նա արշավեց Սելևկյանների վրա, որոնք չէին ցանկանում հպատակվել։ Անտիոքոս Բարեպաշտը չկարողացավ դիմադրել նրան, և Տիգրանն իշխեց Սիրիայի վրա, Եփրատից այն կողմ մինչև Եգիպտոս, սիրիական բոլոր ցեղերի վրա։ Դրա հետ միասին նա տիրեց նաև Կիլիկիան, որ նույնպես սելևկյաններին էր ենթարկվում, և Մագադատեսին բոլորի վրա ստրատեգոս կարգելով, 14 տարի [իշխեց]»[7]։

Ահա՛ և Սարաբոնի վկայությունը. «...ավելի զորանալով՝ [Տիգրանը] ետ վերցրեց այդ ամբողջ հովիտները և ավերեց նրանց երկիրը[8], հատկապես Նինվեն և Արբելան շրջակայքով։ Հնազանդեցրեց նաև Ատրպատականը և Գորգվենեն։ Սրանց հետ՝ նաև Միջագետքի մնացած մասը։ Բացի այդ, անցնելով Եփրատ գետը, նա բռնությամբ նվաճեց Ասորիքը և Փյունիկիան»[9]։

Ինչպես տեսնում ենք, անտիկ հեղինակները Տիգրանի կողմից Ասորիքի գրավման մասին տալիս են հակասական տեղեկություններ։ Մեզ համար ավելի ուշագրավը Հուստինոսի կարծիքն է, որովհետև նա, լավատեղյակ լինելով, բնութագրել է նաև Ասորիքի ներքին կյանքը, որով և, մասամբ, պայմանավորված է Տիգրանի մուտքն Անտիոք։ Հուստինոսի այն խոսքերը, թե եղբայրների փոխադարձ ատելությունը և ժառանգաբար նրանց որդիներին անցած թշնամությունը ծնեցին անընդհատ պատերազմներ, որոնք ծայր նվաստության հասցրեցին Ասորիքն ու նրա թագավորներին, միանգամայն ճիշտ են բնութագրում Ասորիքի իրական վիճակը։ Հուստինոսն ակնարկում է Սելևկյան տիրապետության քայքայմանն ուղեկցող ներգինաստիական գահակալական գզվռտուքը։

---

5 Խոսքը առաջին Միհրդատյան պատերազմի մասին է (88—84 թթ. մ. թ. ա.)։

6 Ն. Դեբեվուազն այն կարծիքին է, թե այստեղ խոսքը վերաբերում է պարթևական թագավոր Միհրդատ II-ին։ Մեր կարծիքով Հուստինոսն ի նկատի ունի Միհրդատ Եվպատորին։ (N. Debevoise, A. Political History of Parthia, Chicago, 1938, էջ 47, ծանոթ., 70)։ Տիգրան II-ը 88 թ. մ. թ. ա. իրեն էր ենթարկել Միջագետքի այն շրջանները, որոնք մինչ այդ պարթևների տիրապետության տակ էին (տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, Երևան, 1945, էջ 148—150)։

7 Appiani Alexandrini, Historia Romana (XI—XII) Syr., 48 (թարգմանությունը՝ Ս. Կրկյաշարյանի)։

8 Խոսքը վերաբերում է պարթևներին։

9 Strabonis, Geographica, XI, 14, 15.

Այսպես. մ. թ. ա. 96 թվականից մինչև Տիգրանի կողմից մ. թ. ա. 83 թվականին Անտիոքի գրավումը, տասներկու տարվա ընթացքում, Սելևկյան գահի վրա (և հաճախ միաժամանակ) եղել են վեց թագավորներ[10]. Սելևկոս VI էպիփանես Նիկատոր 96—95 թթ. մ. թ. ա., Դեմետրիոս III Փիլիպատոր 96—88 թթ. մ. թ. ա., Անտիոքոս X Եվսեբոս 95—92 թթ. մ. թ. ա., Անտիոքոս XI Փիլադելփոս 93 թ. մ. ա., Փիլիպոս I Փիլադելփոս 93—84 թթ. մ. թ. ա., Անտիոքոս XII Դիոնիսիոս 87—84 թթ. մ. թ. ա.։

Սիրիական ժամանակագրությունն արդեն մ. թ. ա. 83—69 թթ. Ասորիքի թագավոր է նշում Տիգրանին։ Ասորիքում Տիգրանի գահակալման կապակցությամբ ակադ. Հ. Մանանդյանը գրում է. «Ինչպես տեսնում ենք, Ստրաբոնի հաղորդած այս տեղեկությունները հակասում են Հուստինոսի վկայությանը, որը պարզ ու որոշ ասում է, թե Տիգրանը Ասորիքին տիրել է բնակիչների հոժարակամ առաջարկությամբ։ Այդ հակասության մասին միանգամայն հավանական կարելի է համարել Աստուրյանի բացատրությունը։ Նրա կարծիքով՝ վերոհիշյալ երկու վկայությունն էլ կարող են ուղիղ լինել, որովհետև Տիգրանը, հրավիրված լինելով որոշ կուսակցության կողմից, պետք է իրեն հպատակեցրած լիներ զենքով մյուս կուսակցությանը»[11]։ Բելինջերն այն կարծիքին է, որ Տիգրանի կողմն անցան արևելցիները, այսինքն բնիկները, որոնք հոգնել էին քաղաքացիական կռիվներից[12]։

Վերը նշված կարծիքների կապակցությամբ պետք է հիշատակել հետևյալը։ Իսկապես, Տիգրանի դեմ տևական պայքար սկսեց Սելենե թագուհին, որն ամրացել էր Փյունիկիայում։ Նա անչափահաս որդի ուներ և գահի հավակնորդ էր։ Հայտնի է նաև, որ Տիգրանը, հավանական է նավատորմիզ չունենալու պատճառով, դժվարությամբ է գրավել Սելևկիա և Սոլի նավահանգիստները։ Բելինջերն այն ծայրահեղ և ոչ ճիշտ կարծիքին է, որ Տիգրանին չի հաջողվել գրավել որևէ ծովափնյա քաղաք (ինչպես կտեսնենք հետո, Տիգրանը ոչ միայն գրավել է ծովափնյա քաղաքներ Լաոդիկեան, Բերիթը և Ապամեան, այլ նաև նրանց ավել է ազատություն)։

Տիգրան II-ի գահակալության կողմնակիցներն անպայման եղել են մայրաքաղաք Անտիոքի և ցամաքային առևտրով շահագրգռված մյուս քաղաքների այն խավերը, որոնց համար խաղաղությունը և առևտրի ապահովությունը՝ ձեռնտու էր։ Դրանք կարող էին լինել և՛ բնիկներ, և՛ հրեաներ, և՛ հույներ։

Սիրիական սեփական արտադրանքի առարկաները բազմազան էին։ Սիրիայի արդյունաբերողները արտահանում էին ներկված գործվածքներ, ապակի[14], մեսաղյա իրեր ու գործիքներ, շինափայտ, գինի, յուղ, չոր մրգեր, բալասան (бальзам)։ Արևելքի հետ ունեցած առևտուրը պետությանը և քաղաքներին տալիս էր խունկ և զմուռս, որոնք անհրաժեշտ էին կրոնական արարողությունների համար։ Արաբիայից ներմուծվում էին համեմունք, մարգարիտ,

---

10 Աղյուսակը տե՛ս Alfred R. Bellinger, The End of the Seleucids. „Transactions of the Connecticut Academy of Arts and Sciences", vol. 38, June 1949 (Table of Kings)։ Հմմտ. նաև Հրանդ Ք. Արմեն, Մեծն Տիգրան, Գահիրե. 1957, էջ 90—91։

11 Հ. Մանանդյան, Տիգրան Բ և Հռոմ, Երևան, 1940, էջ 51։

12 Bellinger, նշվ. աշխ., էջ 80։

13 Նույն տեղում, էջ 81։

14 Մ. թ. առաջին դարին վերաբերող այդ ապակու նմուշներ գտնվել են նաև Հայաստանում, Գառնիի պեղումների ժամանակ։ Տե՛ս Г. Тирацян, О Торговых связах Армении с Сирией в античное время, «Палестинский сборник», вып. IV, 1959, էջ 78։

նուրբ գործվածքներ, Հնդկաստանից՝ փղոսկր, ադամանդ, ստրուկներ, Չինաստանից՝ մետաքս։ Առևտրի կարևոր կենտրոններ էին ծովային քաղաքներ Գազան, Ասկալոնը, Պտոլեմայիսը, Կեսարիան, Տյուրոսը, Սիդոնը, Բերիթը, Բիբլոսը, Լաոդիկեան։ Մյուս կողմից, այդ առևտրի մեջ հսկայական նշանակություն էին ստանում այն քաղաքները, որոնցից անմիջապես սկիզբ էին առնում քարավանային ճանապարհները։ Դամասկոս, Պետրա, Պալմիրա քաղաքներից քարավանային ճանապարհները ձգվում էին մինչև Պարսից ծոց և Կարմիր ծով[15]։ Մի ուրիշ ճանապարհ Սելևկիայից և Անտիոքից ձգվում էր դեպի Զեգմա, Հայաստան և ապա՝ Սև ու Կասպից ծով։ Տիգրան II-ի ժամանակ Հայաստանը, բացի Արտաշատով անցնող տարանցիկ ճանապարհներից, հսկողության տակ էր պահում Միջագետք-Զեգմա-Անտիոք-Միջերկրական ծով ցամաքային առևտրի ճանապարհները[16]։

Անտիոքը, որ հայերին հայտնի է Աւագն Անտիոք անունով[17], Տիգրանը դարձնում է իր տերության մայրաքաղաք, իսկ Ասորիքը՝ առանձին սատրապություն և կառավարիչ է նշանակում Բագդատես[18] (Բագարատ Μαγαδάτης-βαγαδάτης) զորավարին, որի նստավայրը դարձյալ Անտիոքն էր։ Մանանդյանն ընդունում է Մարկվարտի այն կարծիքը, որ այս Բագարատը Բագրատունիների նախարարական տոհմի նախահայրն է[19]։

Կոյլեսիրիան (Κοιλη Συρία- Խորագույն Ասորիք), հավանաբար, չի մտել նորաստեղծ այս սատրապության մեջ։ Աղբյուրներում կոնկրետ վկայություններ չենք գտնում Կոյլեսիրիայի և նրա գլխավոր քաղաքներ Դամասկոսի ու Խալկիսի՝ Տիգրանի կողմից գրավված լինելու մասին։ Բայց պետք է պարզել, թե Տիգրանն ինչ հարաբերությունների մեջ է եղել Կոյլեսիրիայի իշխողների հետ և, արդյո՞ք, միջամտել է նրանց գործերին։

Դամասկոսը երկար ժամանակ կովախնձոր էր Հրեաստանի և Նաբաթեական թագավորության միջև։ Մ. թ. ա. 84 թ. Դամասկոսը գրավում է Նաբաթեական թագավոր Արեթասը. նա այնտեղ հատել է իր պատկերով շատ դրամներ[20]։ Դամասկոսում Արեթասի իշխանությունը տևել է հավանաբար մինչև մ. թ. ա. 74—73 թթ.։ Մ. թ. ա. 72—71 թթ. Դամասկոսի դրամների վրա երևում է արդեն Տիգրան II-ի պատկերը, և այդ փաստը մեզ հնարավորություն է տալիս խոսելու Տիգրանի կողմից Դամասկոսն իրեն ենթարկելու մասին, հանգամանք, որ սերտորեն կապվում է Խալկիս քաղաքի ու նրա իշխող Պտղոմեոս Մենայոսի հետ։ Խալկիսի թագավորությունն առաջացել էր Խալկիս քաղաքի շուրջը, և Խալկիսի Պտղոմեոսը նույնպես սկսել էր ընդարձակել իր տիրույթները շրջապատի հաշվին։ Ըստ երևույթին սա ընդունել էր Տիգրանի գերիշխանությունը, և մ. թ. ա. 73—72 թթ. վերջինս թույլ էր տվել Պտղոմեոս Մենայոսին Խալկիսում, ուր մինչ այդ դրամներ չեն հատվել, հատելու իր դրամները։

---

15 А. В. Рановнч, Восточные провинции Римской империи I—II вв., М.—Л., 1949, էջ 149—150։

16 Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, էջ 70։

17 Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 41։

18 App., Syr., 48.

19 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, Երևան, 1945, էջ 153։

20 Bellinger, նշվ. աշխ., էջ 78, ծանոթ. 88։

Դրանք կրում են Պտղոմեոսի պատկերը, բայց առանց անվան[21]։ Սա նշանակում է, որ Պտղոմեոսը Տիգրանի ենթակա դաշնակիցն[22] էր, և այդ դաշնակցությամբ Տիգրանը հաջորդ տարի գրավում է Դամասկոսը (այդ տարվանից արդեն դամասկյան դրամները կրում են Տիգրանի պատկերը), վռնդում այնտեղից Արեթասին և քաղաքը մտցնում Կոյլեսիրիայի կազմը՝ դաշնակից ու կախյալ Պտղոմեոսի կառավարչությամբ։ Հայտնի է, որ մ. թ. ա. 70—69 թթ. հրեական թագուհի Ալեքսանդրան թագաժառանգ Արիստոբուլոսի զորավարությամբ մի արշավանք է ձեռնարկել դեպի Դամասկոս՝ Պտղոմեոսի դեմ[23]։

Ըստ էության անորոշ է մնում Էմեսայի թագավորության հարցը։ Այն գտնվում էր Դամասկոսի և Անտիոքի միջև։ Բուշիեն, օրինակ, գրում է[24], որ Տիգրանն Ասորիքի սահմանային մասերը հանձնեց իր վասալներին՝ արաբ թագավորներին։ «Ասորիքի սահմանային մասերը» Կոյլեսիրիան և Էմեսայի թագավորությունն են, որոնք թիկունքից շրջափակում ու պաշտպանում էին բուն Ասորիքը։ Ենթադրելի է, որ Էմեսայի թագավորությունը դարձնելով իրեն դաշնակից, Տիգրանը պահպանել է նրա նախկին վիճակը, ինչպես Խալկիսի թագավորությունը։

Քանի որ Դաշտային Կիլիկիան Սելևկյան թագավորության մի մասն էր, Տիգրանը, բնականաբար, պետք է ունենար դրա և հարակից երկրների նվաճման հավակնություն։ Տիգրանին Կիլիկիայում դիմադրել է Սոլի նավահանգիստը, որը գրավելուց հետո Տիգրանն ավերել է։ Այնուհետև նա Կիլիկիայի բնակչությունը տեղահանել ու բնակեցրել է իր մայրաքաղաք Տիգրանակերտում։ Ապպիանոսի[25] վկայությամբ, Տիգրանը միայն Կապադովկիայից Հայաստան է տեղափոխել մոտ 300 հազար մարդ։ Թերես այս 300 հազարի մեջ մտնում են նաև կիլիկյան քաղաքներից տեղահանվածները[26]։ Ստրաբոնը գրում է, որ հելլենական տասներկու քաղաքներից բնակչություն է տեղափոխվել Հայաստան։ Այս 12 քաղաքներից աղբյուրները նշում են միայն երկուսի անունը՝ կիլիկյան նավահանգիստ Սոլին[27] և Կապադովկիայի մայրաքաղաք Մաժաքը։ Գ. Սարգսյանն այս երկուսին ավելացրել է նաև երեքը՝ Մալլոս, Ադանա, Էպիֆանիա[28]։ Տիգրանը Կիլիկիան նույնպես վերածեց Հայկական տերության սատրապության։

Կիլիկիայի կապակցությամբ Ստրաբոնը տալիս է վերին աստիճանի հետաքրքրական հետևյալ վկայությունը. «Հայերը Սելևկյան թագավորների

---

[21] H. Seyrig, Antiquitees Syriennes, 42. Sur les eres de quelques villes de Syrie-Syria, 1950, XXVII, էջ 47—48։

[22] Ս. Կրկյաշարյանը նույնպես այն կարծիքին է, որ Պտղոմեոս Մեննայոսը Տիգրանի դաշնակիցն էր։ (Տե՛ս Ս. Կրկյաշարյան, Հովսեփոս Փլավիոսը հայերի և Հայաստանի մասին, անտիպ)։

[23] Jos., Antq. XIII, 15, 14, B. Y, I, 5, 3։ Ահա այդ հատվածն ամբողջությամբ. «Իսկ Ալեքսանդրան [Արիստոբուլոսի գլխավորությամբ] զորք ուղարկեց Դամասկոս այն պատճառով, որ Պտղոմեոսը անդադար ճնշում էր քաղաքը, սակայն նա վերադարձավ իր մոտ առանց որևէ նշանակալից բան անելու։ Մյուս կողմից Հայոց թագավոր Տիգրանին, որը բանակել էր Պտղոմայիս քաղաքի առջև և պաշարել էր այնտեղ Կլեոպատրային, դաշինքով և նվերներով հեռացրեց»։ (Հովսեփոս Փլավիոսի թարգմանությունը տե՛ս Ս. Կրկյաշարյանի անտիպ աշխատությունում)։

[24] E. S. Bouchier, Syria as a Roman Province, Oxford, 1916, էջ 20—21։

[25] App., Mithr., 67.

[26] Г. X. Саркисян, Тигранакерт, М., 1960, էջ 52։

[27] Dio, XXVI, 37, Plut., Pomp., 28.

[28] Г. X. Саркисян, նույն տեղում, էջ 53։

հզորությունը խորտակեցին, նրանց սերունդը ամբողջովին ջնջեցին և ծովը հանձնեցին կիլիկեցիներին»[29]։ Վերը տեսանք, որ Տիգրանը Կիլիկիան գրավել և բնակչությունը գաղթեցրել է Հայաստան, հապա ինչպե՞ս «ծովը տվեց կիլիկեցիներին», կային արդյո՞ք ուրիշ կիլիկեցիներ։

Կիլիկեցիներ անվան տակ այստեղ, ըստ երևույթին, պետք է տեսնել Միջերկրականի ծովահեններին, որոնց Տիգրանը կարող էր տալ ծովը՝ նրանց դեմ պայքարելու համար նավատորմիզ չունենալու պատճառով։ Մ. թ. ա. I դարի սկզբին Միջերկրական ծովը գտնվում էր ծովահենների ձեռքին։ Դյուրաշարժ նավերով նրանք վխտում էին Միջերկրականի վրա, պաշարում քաղաքներ, ավերում կղզիներ։ Որոշ քաղաքներ, ստիպված, նրանց հարկ էին վճարում։ Նրանք ափ էին ելնում և ավարառություն անում մեծ ճանապարհներին։ Ծովով ճանապարհորդելը դարձել էր անհնարին[30]։ Հռոմեական առևտուրը ծովահենությունից հսկայական վնաս էր կրում։ Դա մի տեսակ լողացող պետություն էր ծովի վրա։ Ծովահեններն իրենց անվանում էին կիլիկեցիներ։ Ասլպիանոսի մոտ պահպանվել է մի ընդարձակ վկայություն նրանց մասին. «...նրանք իրենց համար նավեր էին կառուցում և զենք արտադրում։ Նրանց բոլորի գլխավոր կայանը կամ ճամբարը այսպես կոչված լեռնային (τραχεῖα-խիստ) Կիլիկիան էր...[31] Այդ պատճառով բոլորը նրանց սկսեցին կոչել «կիլիկեցիներ» ընդհանուր անվամբ... քանի որ այդ շարիքը փաստորեն սկիզբ առավ Լեռնային Կիլիկիայի բնակիչներից, հետո միայն նրանց միացան սիրիացիները, Կիպրոսի բնակիչները, պամֆիլիացիները, մերձպոնտոսյան ժողովուրդները»[32]։

Ծովափնյա հունական որոշ քաղաքներ, հիմնականում ինքնավարություն ունեցող, ծովահենների հետ առևտրական հարաբերությունների մեջ էին։ Ամենացայտուն օրինակը Պամֆիլիայի Սիդե քաղաքն էր, որի նավաշինարաններում ծովահենների համար նավեր էին կառուցվում։ Հայտնի է նաև, որ Ասորիքի գահի հավակնորդ Տրիփոնն իր իշխանությունն ամրապնդելու համար օգնություն է խնդրել ծովահեններից։ Նրանց հետ գործնական հարաբերությունների մեջ է մտել նաև ստրուկների հայտնի ապստամբության առաջնորդ Սպարտակը։

Հռոմը ծովահենների հետ առայժմ չէր կարողանում հաշվեհարդար տեսնել։ Մ. թ. ա. 84 թվականին, երբ Սուլլան գտնվում էր Փոքր Ասիայում և նրա նավատորմը Միջերկրական ծովում էր, ծովահենները մեկը մյուսի ետևից կողոպտեցին և ավերեցին Սամոթրակե, Կլազոմե, Սամոս և Յասոս քաղաքները[33]։ Ուրեմն, ավելի ողբերգական է եղել այն քաղաքների վիճակը, որոնք չեն ունեցել հռոմեական նավատորմի պաշտպանությունը։ Մ. թ. ա. 79 թ. Պուբլիոս Սերվիլիոսը գալիս է Կիլիկիա՝ ծովահենության դեմ պայքար սկսելու, հաս-

---

29 Strab., XIV, 5, 2.

30 Պլուտարքոսի մոտ պահպանվել է մի հետաքրքիր վկայություն Կեսարի մասին. «...նա [Կեսարը] վերադարձի ճանապարհին Յարմակուղա կղզու մոտ գերվում է ծովահեններից, որոնք այդ ժամանակ ունեին մեծ նավատորմ և իրենց անթիվ նավերի շնորհիվ իշխում էին ծովի վրա։ Երբ ծովահենները նրանից պահանջեցին որպես փրկագին քսան տաղանդ, Կեսարը ծիծաղեց, հայտարարելով, թե նրանք չգիտեն, ում են գերել և ինքն առաջարկեց նրանց 50 տաղանդ»։ Plut, Caesar, I, II.

31 Արևմտյան լեռնային Կիլիկիան մ. թ. ա. 102 թ. գրավել էին հռոմեացիները։

32 App., Mithr., 92—96.

33 Т. Моммзен, История Рима, т. III, 1945, էջ 37—41։

նում է որոշ հաջողություններ։ Բայց ծովահենները դեռ ռազմական նկատելի ուժ էին. Միհրդատյան երրորդ պատերազմի ժամանակ նրանց հետ դաշինքի մեջ է մտնում Արևելքում՝ Միհրդատ Եվպատորը, Իսպանիայում՝ քաղաքական վտարանդիների առաջնորդ Սերտորիոսը[34]։

Տիգրան II-ը Միհրդատյան երրորդ պատերազմին, ճիշտ է, չի մասնակցել, բայց դաշնակցի պարտավորությամբ կարող էր օժանդակել Միհրդատին, ինչպես և, իր շահերից ելնելով, դաշինք կնքել իր դաշնակցի դաշնակիցների՝ ծովահենների հետ։ Թերևս այսպես են, նրանց ձեռնպահությունն ապահովելով, «հայերը ծովը հանձնել կիլիկեցիներին»։

Տիգրանն այնուհետև դրավեց Դաշտային Կիլիկիայի (Κιλικία πεδιάς) արևելյան մասում գտնվող Կոմմագենեի փոքր թագավորությունը, այդպիսով անմիջական հարևան դառնալով հռոմեացիներին, որոնք դեռ մ. թ. ա. 102 թ. դրավել էին Լեռնային Արևմտյան Կիլիկիան (Κιλικία τραχεῖα)։

Ասացինք, որ Սելենե թագուհու դեմ, որ ամրացել էր Փյունիկիայի Պտոլեմայիս քաղաքում, Տիգրանը սարսափած էր պայքարել երկար ժամանակ։ Այդ քաղաքի նվաճման կռիվները ընդմիջումներով տևեցին մոտ 13 տարի։ Դեռ մ. թ. ա. 75 թ. Սելենեն իր երկու՝ Անտիոքոս և մյուս որդուն (անունը հայտնի չէ) ընծաներով ուղարկել էր Հռոմ։ Նրանք սենատին պահանջ էին ներկայացրել ստանալու Ասորիքի գահը, հավակնում էին տեր լինելու նաև Եգիպտոսին, որի Պտղոմեոս Լաթյուրոս թագավորը 80 թվականին մահացել էր՝ իր ետևից թողնելով գահին ձգտողների մի մեծ բազմություն։ Սենատը բավարարեց ասորական գահն ստանալու Անտիոքոսի պահանջը, բայց ծանրաբեռնված լինելով բուն Հռոմին վերաբերող հոգսերով, չմիջամտեց եգիպտական գահի խճճված հարցերին[35]։ Անտիոքոսը Ասորիք է վերադարձել մ. թ. ա. 73 թվականին։

Սելենեի դեմ պայքարն ավարտվեց մ. թ. ա. 70 թվականին։ Տիգրանը դրավեց Փյունիկիան և դերեց Սելենեին։ Հետագայում նա մահապատժի ենթարկվեց։ «Այստեղ է հիմա Եփրատի գետանցը. նրա դիմաց է գտնվում Միջագետքի Սելեկիա բերդը, որը Պոմպեոսը միացրեց Կոմմագենին. այս բերդում Տիգրանը սպանեց Սելենեին, վերակոչված Կլեոպատրա, Ասորիքից վռնդելուց և միաժամանակ բանտարկելուց հետո»[36]։ Տիգրանը Սելենեի որդուն՝ Անտիոքոսին, հավանաբար չէր գերել, համենայն դեպս աղբյուրներն այդ մասին չեն հիշատակում։ Հնարավոր է, որ Հռոմից վերադառնալուց հետո Անտիոքոսը ժամանակավորապես հաստատվել էր Փոքր Ասիայում, որի համար և ստացել էր Ասիատիկոս մականունը։

Հետագա դեպքերի մասին Հովսեփոս Փլավիոսը վկայում է. «...լուր է հասնում, թե Հայոց Տիգրան թագավորը երեք բյուր զորքով ներխուժել է Սիրիա և գալիս է Հրեաստանի դեմ։ Այս, բնականաբար, ահաբեկեց թագուհուն և ժողովրդին։ Ուստի, նրանք բազում և արժանավայել ընծաներ ուղարկեցին նրան և դեսպաններ, երբ նա դեռևս պաշարում էր Պտոլեմայիս [քաղաքը], որովհետև Սելենե թագուհին, որը կոչվում էր նաև Կլեոպատրա, այդ ժամանակ տիրում էր Սիրիային և հորդորել էր բնակիչներին՝ դռները փակել Տիգրանի առաջ։ Ուստի, դեսպանները հանդիպելով նրան, խնդրում էին բարե-

[34] Plut., Sert., XXIII, The Cambridge Ancient History IX, էջ 321։
[35] Bellinger, նշվ. աշխ., էջ 80։
[36] Serab., XVI. II, 3.

նպաստ պայմաններ շնորհել թագուհուն[37] և ժողովրդին։ Իսկ նա, գնահատելով այսքան հեռու տարածությունից նրանց ժամանելը, լավագույնս հուսագրեց։ Բայց հազիվ էր Պտոլեմայիսը գրավվել, երբ լուր հասավ Տիգրանին, թե Լուկուլլոսը, հետապնդելով Միհրդատին, չի կարողացել նրան բռնել, քանի որ [վերջինս] փախել է իբերների երկիրը. և [Լուկուլլոսը] ասպատակելով Հայաստանը, պաշարել է [մայրաքաղաքը]։ Տիգրանն այս մասին իմանալով, վերադարձավ իր սեփական երկիրը»[38]։

Հովսեփոսի վերոհիշյալ վկայությունից երևում է, որ Տիգրանը Հրեաստանի վրա չի հարձակվել, բայց, ըստ երևույթին, այս երկիրը նույնպես ընդունել է Տիգրանի գերիշխանությունը[39]։ Հովսեփոսն ասում է, որ «...[Արիստորուլոսը] Տիգրանին ... դաշինքով և նվերներով հեռացրեց»[40]։ Այս ժամանակ էլ խնամիական կապեր են հաստատվել Արտաշեսյանների և Հրեաստանի թագավորական դինաստիայի միջև, և հետագայում, արդեն մ. թ. 6 թվականին, Տիգրան V-ը, որ հավանաբար թոռն էր տիգրանյան շրջանի Հրեական թագավոր Հերովդես I Մեծի, հանդես մտավ որպես արտաշեսյան գահի հավակնորդ[41]։

Այսպիսով, հաստատվում է Ապպիանոսի վկայությունը, թե Տիգրանը տիրակալն էր Կիլիկիայի և Եփրատի ու Եգիպտոսի միջև եղած բոլոր երկրների։

Մերձավորարևելյան տիրակալության տարիները Հուստինոսը համարում է խաղաղ իշխանության ժամանակներ։ Այս վկայությունը, գոնե Ասորիքի վերաբերմամբ, միանգամայն համապատասխանում է իրականությանը։ Չբորբոքելով թշնամությունը, այլ շահելով ենթակայի համակրանքը, Տիգրանն Ասորիքի ծաղկուն քաղաքները թողեց արտոնյալ այն վիճակում, ինչ վիճակում էին նրանք Սելևկյանների վերելքի ժամանակ։ Դամասկոսը[42], ինչպես և Անտիոքը[43] պահպանեցին դրամահատության իրենց իրավունքները։ Հավանաբար անտիոքցիներին սիրաշահելու նպատակով էր, որ Տիգրանն առաջին անգամ Անտիոքի գրամների վրա դրոշմեց քաղաքը հովանավորող աստվածուհու՝ Տյուխեի պատկերը[44]։

---

37 Խոսքը Հրեաստանի թագուհի Ալեքսանդրայի մասին է։

38 Jos., Antiqu., XIII, 16, 4; B. Y. I, 5. 3.

39 Այս իրադարձությունների մասին պահպանվել են տեղեկություններ նաև Մովսես Խորենացու մոտ։ «Եւ նոյն հետայն դիմէ յաշխարհն Պաղեստինացւոց՝ վրէժս պահանջել ի Պտղոմայիդ Կղէոպատրայ յաղագս Դիոնիսի որդւոյ նորա առ հայր իւր յանցանաց։ Առեալ գերի բազում ի հրէից՝ նստի շուրջ զՊտղոմայիդ քաղաքաւ։ Իսկ դշխոյն Հրէից Աղեքսանդրիայ որ և Մեսաղինայ, որ էր լեալ կին Աղեքսանդրի, որդւոյ Յոհաննու, որդւոյ Շմաւոնի, եղբօր Յուդայ մակաբէի, որ զայնու ժամանակաւ ունէր զթագաւորութիւն Հրէից, ինչս բազումս տալով՝ դարձոյց զնա անտի։ Քանզի էր լուեալ և համբաւ, թե Վայկուն ոմն անուն յեղուզակ խռովէր զերկիրն Հայոց, զչեռնամուր կալեալ, որ մինչև ցայժմ յանուն յեղուզակին կոչին Վայկունիք»։ Մովսիսի Խորենացւոյ «Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, Բ. ԺԴ։

40 Jos., B. Y. I, 5, 3.

41 Այս մասին Փլավիոսի մոտ կարդում ենք. «...քանզի Ալեքսանդրը Գլափյուրիայից ուներ Երկու որդի՝ Տիգրան և Ալեքսանդր...» (B. Y. I), «...Ուրեմն. սրանք էին, ինչպես նախկինում ասել ենք, Հերովդեսի որդի Արիստորուլոսի զավակները, իսկ Արիստորուլոսը և Ալեքսանդրը Հերովդեսի որդիներն էին՝ ծնված Մարիամեից, որոնց սպանեց նրանց հայրը։ Եվ Ալեքսանդրի սերունդը թագավորեց Մեծ Հայքում» (B. Y. II)։

42 Bellinger, նշվ. աշխ., էջ 81։

43 H. Seyrig, նշվ. աշխ., էջ 13—14։

44 Bellinger, նշվ. աշխ., ծանոթ. 88, հմմտ. նաև Зограф, Античные монеты. М. — Л., 1951, էջ 68—69։

Լաոդիկեա և Բերիթ քաղաքները, որոնք Սելևկյանների ժամանակ չունեին «ազատության» (ἀσυλία) կոչվող արտոնությունը, որ նշանակում էր համեմատաբար լայն ինքնավարություն, «ազատ» են դարձել Տիգրանի ժամանակ։ Այդ արտոնությունը նրանց շնորհվել է մ. թ. ա. 81 թվականին, որը և դարձել է Լաոդիկեայի և Բերիթի քաղաքային տոմարի սկիզբը։ Մեզ հասած նրանց դրամները թվագրված են այդ տոմարով[45]։ Նույնը՝ Ապամեա քաղաքում, ուր դրամ հատել են Տիգրանի տիրակալության տարիներին միայն՝ մ. թ. ա. 76—75 թթ.։ Այս փաստն իսկ խոսում է այն մասին, որ Ապամեան «ազատության» իր արտոնությունները ստացել է Տիգրանից։ Մ. թ. ա. 69 թվականին, երբ Տիգրանը պարտվում է Լուկուլլոսից և սատրապ Բագադատեսը հեռանում է Ասորիքից, Ապամեայում դրամահատությունը կանգ է առնում։

Սեյրիգը փորձում է նույնիսկ բացատրել, թե Լաոդիկեան ինչպես ստացավ «ազատության» արտոնությունը։ Նրա կարծիքով՝ Սելևկիա նավահանգիստը միակն էր, որ դրամ հատելու իրավունք ուներ։ Ներքաշվելով Տիգրանի դեմ համառ պայքարի մեջ, Սելևկիան կորցրեց երկրի տնտեսական կյանքում իր առաջնությունը, և ցամաքային Անտիոքն ու առհասարակ Սիրիան կարիք զգացին ունենալու ծովային այլ նավահանգիստ. Լաոդիկեան առանց հապաղման ստանձնեց Սելևկիայի կորցրած դերը։

Ասորիքում Տիգրանի թագավորության ժամկետի մասին պատմագիրների միջև վեճ է գնացել։ Ոմանք ընդունում են, որ Ասորիքում նա թագավորել է 14 տարի, այսինքն մ. թ. ա. 83—69 թթ., ոմանք էլ՝ 17 տարի, այսինքն մինչև Տիգրանի և Պոմպեոսի միջև կնքված հաշտության տարեթիվը՝ մ. թ. ա. 66 թվականը։

Տիգրանն Ասորիքից հեռացավ մ. թ. ա. 69 թվականին, բայց միայն մ. թ. ա. 66 թվականի աշնանը Արտաշատում Հռոմի և Հայաստանի միջև կնքված պայմանագրի համաձայն էր, որ նա պաշտոնապես հրաժարվեց իր արտաքին նվաճումների ճնշող մեծամասնությունից՝ Ասորիքից, Արևելյան Կիլիկիայից, Կապադովկիայից։ Նա հռչակվեց «հռոմեական ժողովրդի բարեկամ և դաշնակից», որ նշանակում էր, թե Հայաստանն, իր ներքին ինքնուրույնությունն ու ղեկավարությունը պահպանելով հանդերձ, ճանաչում էր Հռոմի գերիշխանությունը և պատերազմի ժամանակ պարտավոր էր զորքով օգնել նրան։

Պոմպեոսը Միհրդատ Եվպատորին պարտության մատնելուց հետո մ. թ. ա. 65 թ. հնարավորություն ունեցավ մասնակցելու նաև Ասորիքի գործերին։ Նա մ. թ. ա. 64 թվականին Սելենեի որդուն՝ Անտիոքոս XIII թագավորին մահապատժի ենթարկեց, իսկ Ասորիքը վերածեց հռոմեական պրովինցիայի։

СИРИЯ В СОСТАВЕ АРМЯНСКОЙ ДЕРЖАВЫ

Ж. Г. ЭЛЧИБЕКЯН

Резюме

С согласия рабовладельческой верхушки Сирии в 83 г. до н. э. Тигран II овладел Сирией. Годы правления Тиграна II в Сирии Юстин характеризует как «мирное царствование». Будучи тонким политиком и

45 H. Seyrig, նշվ. աշխ., էջ 18, 28, 29։

хорошо разбираясь в сложившейся ситуации, Тигран оставил богатые и развитые города Сирии в том привилегированном положении, в котором они находились в период царствования Селевкидов и даже увеличил их привилегии.

Тигран II занял также входившую в состав Селевкидского царства Киликию и превратил ее в сатрапию армянского государства.

По свидетельству Страбона, армяне разрушили могущество Селевкидов и «передали море киликийцам». Под киликийцами в данном случае надо понимать пиратов, господствовавших в Средиземном море, и имевших своей основной базой Киликию. Они были в союзе с понтийским царем Митридатом Евпатором, который был также и союзником Тиграна, что могло дать возможность и Тиграну вступить в союз с пиратами, чтобы использовать их в своих политических целях.

Тигран II оставил Сирию в 69 г. до н. э., а уже в 66 г., согласно заключенному в Арташате между Арменией и Римом договору, Тигран официально отказался от своих завоеваний—Сирии, Восточной Киликии, Каппадокии и других.